արկիք հուր 'ի Ս. Տեղիս ձեր, և նոքա ասեն՝ քաւ լիցի մեզ առնել զայդպիսի իրս, զի այս դէպք իմն է և պատահար. դարձեալ աղաղակեցին Յոյնք, զի եթէ դէպք էր՝ վասն է՞ր ոչ ամապարեցիք չիջուցանել զհուրն կոչելով օգնութիւն յարտաքուստ, այլ կայիք 'ի զննին անհոգաբար, և այլ սոցին նման բանք՝ ջանալով պարտաւոր ցուցանել զՀայս, այլ նոքա դարձեալ զնոյն բան երկրորդեցին։ Կոչեաց դատաւորն զմիաբանս տաճարին երից աղգաց և մի առ մի եհարց ցնոսա՝ թէ նախ ուստի եկ հուրըն, և նոցա պատասխանի տուեալ ասեն, այս պատուհաս իմն է քրիստոնէից յԱստուածակոյս կողմանէ. բայց նախ տեսաք զի այրէին եկեղեցին եւ խորանքն Հայոց։ Եւ զի որսացեալ էին Յոյնք զԼատինս 'ի կողմն իւրեանց, և ընդ նոսա միաբանութեամբ առին դիր 'ի դատաւորէն 'ի վնաս Հայոց։ Առին և Հայք բազում աշխատութեամբ եւ ծախիւք չինել զրաժին տեղիս իւրեանց, այլ Յոյնք տրօք և չարախօսութեամբ ջանային պարտաւոր ցուցանել զՀայս, և երկնէին 'ի միտս իւրեանց միայնակ չինել ըզտաճարն և արտաքսել անտի զՀայս և զհետեւակս նոցին, և նուաճել զԼատինս ընդ իշխանութեամբ իւրեանց։ Զայս զգացեալ Լատինաց 'ի բաց կացին 'ի միաբանութենէ Յունաց՝ և յարեցան 'ի Հայս, և եդին պայման 'ի միջի՝ կալ մնալ սիրով և խաղաղութեամբ. դարձուցին յետս զգերեանս զոր առեալ էին ընդ Յունաց 'ի դատաւորէն, թէ ոչ կարեմք յայտնապէս լինել զրպարտիչ աղգին Հայոց, ապա առին դիր ընդ Հայոց։ Ապշեցան Յոյնք ընդ այս և ոչ համարձակէին առաքել զգերեանս 'ի Կոստանդինուպոլիս, այլ թողին առ ժամն հոգալ զամենայն ինչ անդ։ Լատինք դրեցին առ ազգայինս իւրեանց և առ Դեսպանն Գաղղիոյ, հոգալ և պատրաստել զամենայն կարեւոր նիւթս 'ի կառուցումն հրկիզեալ տաճարին 'ի ձեռն թագաւորացն Եւրոպիոյ, որպէս երբեմն մեծն Կոստանդիանոս. այսպէս ասէին Հայոց իբրեւ բարեկամ։ Իսկ Հայք կասկածեալ 'ի նենգութենէ Յունաց՝ զի մի՛ չարիս ինչ կրեսցեն 'ի նոցանէ, խափանել զԹափօրս և զայլ արարողութիւնս եւ զՀանդէս Լուսաւորութեան 'ի Ճրագալուցի Զատկին, թախանձանօք դրեցին առ Պատրիարքն և առ գլխաւորս աղ-